ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

14 ապրիլի 2026թ. թիվ 377

Ն.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ ԵՎ Վ.ԱՍԼԱՆՅԱՆԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆԸ
ՄԱՄՆԱԿՑԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով և 13-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ և 12-րդ կետերով, հաշվի առնելով «ՎԻՆՆԵԹ Հայաստան» ցանցի նախագահ Ռուզաննա Տոռոզյանի 2026 թվականի ապրիլի 13-ի գրությունը՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ եմ.

1. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ Նաիրա Համբարձումյանին և զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի ավագ մասնագետ Վարդուհի Ասլանյանին 2026 թվականի ապրիլի 16-ին թույլատրել մասնակցելու «Կնոջ ուժը, նրա ապագան» ծրագրի շրջանակներում իրականացվող «Կանանց դերակատարության ամրապնդում տեղական ինքնակառավարման համակարգում» խորագրով միջսահմանային փորձի փոխանակման միջոցառմանը:

2. Միջոցառմանը մասնակցության հետ կապված բոլոր ծախսերը կատարվելու են հրավիրող կողմի հաշվին:

3. Ն.Համբարձումյանի աշխատանքից բացակայության ընթացքում փոխարինող նշանակել ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ Վաղարշակ Եղիազարյանին, իսկ Վ.Ասլանյանի աշխատանքից բացակայության ընթացքում փոխարինող նշանակել ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի գլխավոր մասնագետ Արփինե Ներսիսյանին:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Invalid signature

X

ՄԵՐԻ ԴԱԼԼԱՔՅԱՆ

Signed by: DALLAKYAN MERI 5303860493

Մ.ԴԱԼԼԱՔՅԱՆ

2026թ. ապրիլի 14
ք.Վանաձոր